

ԿԼԱՆՈՆԱԳԻՏԱԿԿԼԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Գ.

ՎԱՐԴԱՊԵՏՈՒՆ ՊԱՅՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԸՍՑ ՏԱԹԵՆՈՒ ԳՊՐՈՑԻՆ

Տառներորդ Աստիճանը արուած բոլոր աստիճաններուն ամփոփումն է, որ բաղ-
ձանքներով և մաղթանքներով կը լրանայ
և կը նուիրագործուի: Գրիգոր Տաթևացին
Առաքեալին սա խօսքերը, — «Գոհանամ
զԱստուծոյ, մտան ամենեցուն ձեր՝ առաւել
լեզուաւ խօսիմ: Այլ ի մէջ եկեղեցւոյն
կամիմ քանս հինգ՝ մասք խօսել, զի և
զայլս խորտիցեմ, քան զբազում քանս
լեզուաւ» (Ա. Կորնթ. ԺԲ. 18-19), կը
հեռացնէ իրենց բնագրական իմաստէն և
խորհրդաբար կը մեկնէ: Առաքեալը կ'ուզէ
ըսել որ լաւ մտածուած հինգ խօսք աւելի
կ'որոժէ քան լեզուախօսութիւնը կամ շա-
տախօսութիւնը, որ սմտքն, կամ ըսա-
ճաթեացոյն՝ սմտաւորք է: Տաթևացւոյն
ըրած ամփոփման համեմատ, Մ. Վրդ. Ը
հինգ պաշտօն ունի. — ա) Սաղմունի, Բ)
Վարդապետի, Գ) Յայտնել զքանս աստուա-
ծային, Դ) Ի լեզուս խօսել, Ե) Թարգմա-
նութիւնս առնել: Բացառութիւններ՝ Ժ.
բոնք Կորնթացւոց թուգթիւնէն առնուած
են. բայց պէտք է խոստովանիլ որ առանք
ինչպէս իրենց բնագրին վրայ՝ նշոյալէս ալ
Տաթևացւոյ գրչին տակ որոշ չեն և ամէն
կիրպով չեն ամփոփեր ու չեն խտացներ
Մանաւոր և Մայրապոյն Վարդապետու-
թեան արեւոյթեան բանաձևերուն մէջ
պարզուած կանոնադրական բացատրու-
թիւնները:

Վերջին ազօթքին մէջ սակայն աւելի
լաւ ամփոփուած է Մ. Վրդ. Ի արուած հա-
լաքեր իշխանութեան բոլոր իմաստը:

Տաթևացին, առ Հայր Աստուած ուղղե-
լով իր ազօթքը, կ'ըսէ. — Օրհնէ՛ այս վար-
դապետ և լեցուր Սուրբ Հոգիովդ, օծէ՛
մասք հոգին Ս. Հոգւոյն պարգևներով ու
շնորհներով, որպէսզի քարոզեսցէ պառա-

ջին և զերկրորդ գալուած սիրեցելոյդ: Ի վեր-
ջ Որդւոյդ Միածնի, և զՊաշտօնապետն և
զհատուցումն ըստ իւրաքանչիւր արժեքի:

Առ Որդին Աստուած ուղղեալ՝ կ'ըսէ.
— Օրհնէ՛ այս վարդապետը, քննադատ
յարութենէն և քաղաքական քննադատներով,
ձեռք զնկով անոնց վրայ և ըսիր. — Ահա
ձեզի խնամութիւնս առաւ, «Գոհացէ՛ քաղա-
կերտեցէք զամենայն հեթանոսաւ, և ևտքը,
իրբ Բահանապետ և Բահանայ, ըսիր,
ալ կրտեցէք զնոսա քանուն Հօր Ս. Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյն, և, իբր Վարդապետ,
կատարելագործեցիր ըսիւով. «Աստուցէ՛ք
նոցա պահել զամենայն զոր ինչ պատուի-
րեցի ձեզ. օծէ՛ այս Վարդապետը ճշմա-
րիտ Հոգիովդ, առաքեալներու ընտրաւ
գառին պէս, և զրկէ՛ իրք քարոզիչ ամէն
ազգերու մէջ. «Այսպով զմարդիկ ի ձեռք
մեզաց և ի խաւարէ տգիտութեան» լա-
սաւորել գիտութեամբ և քարի գործով և
պատասխանայն ճոռադալթիւք: Եւ եղից
սա զօրութեամբ քո ի կանգնեալ գործից
և ի գրեալ մօլորից և չաւառութիւն
որոտեցելոց միտխորիչ կենդանեաց
և յիշատակ նշնեցելոց, բացառ քանայի ար-
քայութեան երկիրց և աւաջնորդ փնեաց
առ Հովին քաջո:

Առ Հօրին Սուրբ Աստուած ուղղեալ՝
կ'ըսէ. — Օրհնէ՛ այս վարդապետը, քա-
ղաքէն ասոր առաքելական հեղեղէն բերան-
արդէպի քարոզէ, վարդապետելի լուսա-
ւորէ, և «Եղիցի շնորհք քո ի խալսալ կանո-
նաց Սկեպեցելոյ՝ ի դնել եւ ի խալսալ ըստ
պիթոյից ժամանակի եւ տեղւոյ եւ ըստ դի-
մաց. կապել և արձակել յերկրի և յերկրի,
ժողովել և հաւաքել զսիրեալեցաւ և ըզ-
հնձեալս ի նախնեացն սրբաց ի ժառանգու-
թիւն արքայութեանդ»:

Առ Ամենասուրբ Երրորդութիւն ուղղե-
լով՝ Վարդապետին համար կը մտղթէ. քաղ-
մապէս շնորհներ, արպէսզի կարող ըլլալ
իր պաշտօնը կատարել, կը մօզթէ Աբելին
արարինուէր կամքը, Ենովքին բարիչոյն
երկայնատեթիւնը, Ենովքին ապրիկեշտա-
բար զսպումն զպայարանացը, Նոգա Նա-
հապետի ազապեցումն խառնակութեանը,
Միւլքինեղիկի պէս ազհրաժարումն ի բար-
մագրապ կենցաղաւորէ: Հայր Ամենասուրբ
բարոյական արարելութիւնը և քանդի-

հեր հաւատքօք, Բաճակի պէս սքանաւոր պտուղս ազօթից մատուցումը. Իսրայէլի (Յակոբ Նահապետի) աստուածաստեղծութիւնը, Յովսէփի ողջախոհութիւնը, Յ. Բայ Ժուժ. կալութիւնը, հեղին Մովսէսի իշխելու կառողութիւնը, Դաւթի խոնարհան և հանճարեղ սաղմոսերգութիւնը, Սողոմոնի իմաստութիւնը, Եղիայի վրէժխնդիր ոգին, Եղիի ճառանանդօրէց հոգին, Նաայի մարգարէի

ՄԱՅՐ ՄԱՇԿԱՅ

(Եր. 337ա)

Պաշտօն Մայրապոյն Վարդապետաց է զի ունիցին գոսուսմն վարդապետութեան և զգրտութիւն հին և նոր աստուածային կառկարանաց և զգոսուսմն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի Սուրբ Երրորդութիւնն և ի մարդկութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Այլ և պաշտօն է զգնեսու հանգերան սեւտ և բրդեղէնա և ունի խաչանման գաւազանս. նստել ի վերայ աթոռս և առնել զբեմասացութիւնս, և ծագել ի ծագ թարց արդիւման քարազել:

Եւ պատիւ սոցա մեծագոյն է քան զքորեպիոկոպոսին՝ որ չունիցի զՄայրապոյն գաւազանս:

Այլ և պաշտօն է՝ զի եղիցին իրբն զվէմա անշարժելիս ի դրանց զժոխոց. և համարձեղ քարոզել և մի՛ երկչիլ ի մահ. սառնէ. մի՛ որսալ զփոտս ի մարդկանէ. մի՛ առնուլ կաշառս և մի՛ երեսապաշտ լինիցին. մի՛ աշատութիւնս. մի՛ ծուլութիւնս. մի՛ հպարտութիւնս և մի՛ թերութիւն ի հաւատս, ի կարգս և ի սոնս իւրեանց ունիցին:

Այլ և լինել հեզ և խոնարհ, և անձանձիր ուսուցանող. և տալ զանձն օրինակ բարեկրօնից և առաքինութեանց. զի զոր քարոզեալցէ՝ զնոյն պարտի լինքն կատարել նախ՝ ըստ տէրութեան քանին թէ զայս գիտէք, ասէ, երանելի ես էք՝ եթէ առնիցէք զայս: Եւ դարձեալ ասէ, թէ արտոցէ և ուսուցէ՝ նա մեծ կոչեացի յարքայութեան երկնից: Ապա թէ ոչ՝ մի զուցէ յամթ տրասցեն զսրծք իւրեանց չլթանց. զի մի՛ յորժամ ի խօսեկն՝ ասասցեն ժողովուրդս վուրդքն ցնոտա. ընդէ՞ր զսր ասէք ոչ ասնէք:

Ճամարձակախօսութիւնը, Մեծն Պօղոսի ուրիշ սուրբ վարդապետներու սքանաւոր ժառանգութիւնը:

Այս ազօթքը չկայ Մայր Մաշտոյի մէջ, Բայց թէ՛ Մայր Մաշտոյի և թէ՛ Ս. Էջմիածնի Մաշտոյի մէջ, Ժ. Լ. Առաքաններու տընտնեան և աքք զբուսած մը կայ, ուր կը ճշգրտի և կը ոտահանուի Մ. Վրդ. ին պաշտօնը: Այդ զբուսաները զէմ գրեմս կը գնենք:

ՄԱՇԿԱՅ ԶՆԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Տպ. Էջմիածնի, Եր. 11.

Պաշտօն Մայրապոյն Վարդապետաց է՝ ունիլով գոսուսմն վարդապետութեան և զգրտութիւն Հին և նոր աստուածային կառկարանաց, և զգոսուսմն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի Սուրբ Երրորդութիւնն և ի մարդկութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Առնել զբեմասացութիւնս և ծագել ի ծագ անխափան քարոզել:

Եւ պատիւ սոցա մեծագոյն է քան զքորեպիոկոպոսին՝ որ չունիցի զՄայրապոյն վարդապետութեան գաւազանս:

Պարտ է՝ զի եղիցին իրբն զվէմա անշարժելիս ի դրանց զժոխոց.

և մի՛ թերութիւն ինչ ի հաւատս՝ ի կարգս և ի կրօնս իւրեանց ունիցին. այլ և լինել հեզ և խոնարհ, և անձանձիր ուսուցանող, և տալ զանձն օրինակ ամենայն առաքինութեանց. զի զոր քարոզեացին՝ զնոյն պարտին լինքն կատարել նախ, ըստ տէրութեան քանին, թէ զայս գիտէք, ասէ, երանելի ես էք եթէ առնիցէք զայս: Եւ դարձեալ ասէ. Որ արտոցէ և ուսուցէ՝ նա մեծ կոչեացի յարքայութեան երկնից: Ապա թէ ոչ՝ մի զուցէ յամթ տրասցեն զսրծք իւրեանց չլթանց, զի մի՛ յորժամ ի խօսեկն՝ ասասցեն ժողովուրդս ցնոտա, ընդէ՞ր զսր ասէք ոչ ասնէք:

երկու քին միջև գտնուած ասարերու-
թիւնները յայտնի են, մա՛նաւանդ Վարդա-
պետական իշխանութեան հետ կապուած
արտաքին նշաններու վրայ, որոնց ըմբռ-
նումը սկզբունքով նոյն մնացած է, նոյնիսկ
գործադրութեան ձեւն ալ ընդհանրապէս
իկոյ մասին պիտի խօսինք ուրիշ թղթածով:

Ե.

1.- ՎԱՐԿԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՒԱՋԱՆԸ — 2.- ԻՐ ԶԵՒԸ
— 3.- ԻՐ ԽՈՐՀՐԱՆՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ — 4.- ԳԱ-
ԽԱՋԱՆԻ ԶԵՒԹՈՒԹԵԱՆ ԱՍԵՆԸ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԵՋ
— 5.- ՏՍԹԵՌՈՒ ՎԱՆՔԻՆ ԳԱՒԱՋԱՆԸ — 6.-
ԱՓՈՒ ԵՒ ԳՈՐԳ (ԽԱՆԶԵ):

1. — Գաւազանը նշանակ է իշխանու-
թեան, նոյնիսկ պարզ հովիւի ձեռքին մէջ,
Գաւազանը հոգեւոր իշխանութեան ալ նշա-
նակ է եկեղեցւոյ մէջ, և հոգեւոր իշխանը,
քառին թէ՛ իրական և թէ՛ այսրանական
իմաստով, հովիւն է իր հոգեւոր հօտին
ժողովուրդին:

Մովսիսականութեան մէջ կար գաւա-
զանք, որ մեծ դեր կատարած է Մովսէսի
և Անարոնի ձեռքին մէջ: Մովսէս, իբր
մարգարէ և ներշնչող, Անարոն՝ իբր խօսող
և վարդապետող այդ ներշնչութեան տակ,
միշտ անբաժան էին իրենց գաւազաններէն:
Իայց մա՛ն գաւազան վաւերական չէր.
Անարոնին գաւազանը միայն ծաղկեցան (°)
պէս քաղվածիւ գաւազաններու մէջ՝ որոնք
զրուհեան վկայութեան խորանը (Թիւք,
Ժէ.): Իկոյ գաւազանը անշուշտ, մա՛նա-
ւանց այս գաւազանին ըմբռնումն էր որ
անշուշտ Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ և
միշտ գործածուեցաւ և կը գործածուի իբր
նշանակ հոգեւոր իշխանութեան:

Եկեղեցւոյ հոգեւոր իշխանն է եպիսկո-
պոսը. հետեւաբար գաւազանն ալ, իբր նշա-
նակ հոգեւոր իշխանութեան, եպիսկոպոսը
միայն իրաւունք ունէր կրել. բայց որով-

հետեւ հոգեւոր իշխանութեան հակառակ
կը կապվէ քարագութիւնը կամ վարդապե-
տութիւնը, կանոն եղած է վարդապետնե-
րուն ալ առլ գաւազան կրելու իրաւունքը՝
իբր նշանակ իրենց հոգեւոր իշխանութեան
եւ ստույգի, մենք տեսանք որ Սիւնեաց
Դպրոցին շնորհիւ ի՛նչ արժէք և նշանա-
կութիւն ունեցած է վարդապետութիւնը,
որ գաւազանի տուչութեան հետ կապուած,
այնքան զիջեցիկ բարձրութեան մը հաս-
ցուցած է Խօսքը, ինչպէս նաև Խօսողին
զիրքը՝ կոնստանդնուպական տառնաշնոր-
հաւանքով: Եւ խօսքին, Աստուծոյ խօսքին,
եղած այս յարգանքն ու պատկանածքը
Հայ եկեղեցւոյ մէջ՝ իրապէս նշանակալի
երևոյթ մըն է: Հակառակ այն իրողութեան
որ շատեր իրենք զիրենք արժանաւոր կար-
ծած են և կը կարծեն զեւ այդ բացօթի
թարգմանն ու իշխանը ըլլալ միանգամայն,
հակառակ այն իրողութեան որ վկայութեան
խորանին առջև քաղվածիւ գաւազաններ
գրուած են, հակառակ նաև այն իրողու-
թեան որ օրէնս հովուի գաւազաններ ալ
ձեռք կ'առնէ Աստուծոյ երբեմն (Ձաք. ԺԱ.
15), և ի՞նչ կարեւորութիւնը խորապէս
ըմբռնուած է Հայ եկեղեցւոյ մէջ, և Գա-
ւազանի առընթիւնը, իր խորհրդապա-
րտաւանդակ նշանակութեամբ, մշտնապէս յան-
գիտեցութիւն մըն է այն բոլոր գանցա-
նութիւններուն և տնտարբերութիւններուն
դէմ՝ որոնց շնորհիւ գաւազաններ, պար-
զապէս ռնտփառութեան գործիքներ գար-
ծած, ոչ ծաղիկ ունին. ոչ ալ պտուղ:

2. — Խնչ ձեւ պէտք է ունենայ Հայ
Վարդապետին գաւազանը: — Դժբախտա-
բար հուսոտական ճշրբար օգիւստաներ կը
պապին մեզ այս մասին, և դարձաւ Տա-
թեացին է որ ինչ ինչ տեղեկութիւններով
քիչ շատ հնութեան մը կը փոխադրէ մեզ:
Հայ եկեղեցւոյ մէջ հիմա գործածուած
գաւազաններու ուսումնասիրելով, երկու զըլ-
խաւոր և տիրով ձեւ կը գտնենք տառնց մէջ.
ա) Երկգլխեան օձաձեւ գաւազանը, և բ)
Մէկ գլխով օձաձեւ գաւազանը: Ինչո՞ք տա-
ռնցին վարդապետական գաւազան՝ իսկ
երկրորդը եպիսկոպոսական գաւազան ա-
նունենիք ծանօթ են: Կարելի չէ ըսել որ
այս երկու ձեւերն ալ սկիզբէն ի վեր հաւա-
սարապէս գործածական եղած ըլլան Հայ

(°) Եւ ահա դաւարեցաւ գաւազանն Ան-
րոնի ի տանն Ղեւոյ, և արձակեաց շաւառիդ,
և ծաղկեաց ծաղիկ, և երեւցոյց ընկոյզ (նոյն
անոյ): — Եւսկ որ ի խորանէն բերին Մովսէս և
Անարոն զգաւազանն ծաղկեալ, զի ի Սիոնէ
կիցէ օրէնք, որ է յեկեղեցւոյ ամենայն իշխա-
նութիւն: Ի յայս միտա զվարդապետաց գաւա-
զան յեկեղեցւոյ ի գաւառ բերեմք զարդարեալն
(Գիրք Հարցմանց, եր. 382բ):

Եկեղեցւոյ մէջ՝ Առաջին ձեռք, աշխարհի վարդապետականը, ամէնէն հին ձեռն է անշուշտ, որովհետեւ Յոյն Եկեղեցւոյ մէջ ալ տիրող ձեռն է այդ Իսկ ժիւոյը, որ ծանօթ է Տաթևացւոյն, շատ ետքը ներառուած է Հատին Եկեղեցիին, ժ.Ս. դարունը^(*)։

Վարդապետական գաւազանը, ըստ Տաթևացւոյն, խաչածեղ գլուխ պէտք է ունենայ, և ստուգուել երկգլխեան օձածն գաւազանը իր ամբողջութեամբ խաչածն է. թէև մեզ Ճամանակակից արուեստը կը սիրէ երկգլխեան օձածն գաւազանի երկու օձերու գլուխները գառուած կէտին վրայ փոքրիկ գունդ մը՝ և գունդին վրայ խաչ մը դնել։ Տաթևացւոյն նկարագրած գաւազանը հետո է եւ միակողմէ, եւ ծայրէն սկսելով կը հասնայ մինչեւ գլուխը, և ոչ թէ մեզ ծանօթ գաւազաններուն պէտք է ծայրը նոյն հաստութիւնը ունի և միայն որածալը կը վերջանայ։ Եթէ Տաթևացւոյն նկարագրած ձեռք պատահական քան մը չէ, նշանակելի է ասոր հնախօսական բովանդակութեան մեզ ծանօթ վարդապետական գաւազանի ձեռն ալ նոր չէ՝ գառուով Յոյն Եկեղեցւոյ մէջ գործածուածէն, ինչպէս վերը ակնարկեցինք։

Գաւազանին օձածն կերպարանքը բուրովին հաւանական է որ Մովսէսի հրաշալի գաւազանին մէկ պատկերն ըլլայ։ Ստեփաննոս Վարդապետի, իր ձեռագիր մէկ գործին մէջ (Երեւն 87—93), պարզապէս ցոյց տուած ըլլալու համար թէ Հայ Եկեղեցին Յոյն Եկեղեցիէն չէ առած օձածն գաւազանը, Վահագնի գրութիւն մէջ կը գտնէ ասոր ծագումը՝ Վահագն, աստապիլական երգերու համահաստ, վրէպներու հետ կրուուելով կը յաղթէ առանց. արդ, Նաղաբէթեան Վահագնը կը բազմաթիւ Յունաց շերտերէն հետ, որ տարաբան թ մեզ Տիր՝ ճեպարեան պատգամաւոր միծին Արամազդայ՝ կրկին օձերու կը հանդիպի երբեմն ըստ Վահագնի և ձեռքի գաւազանաւ կը գտնէ գաւազանը՝ յիշերուց՝ մինչ ընդ իրեարար կը մտնէ։

(*) Գաւազանի մասին տե՛ս Քննադատի միջոցով Մատնաւորին մէջ (Հնդկական Օրացոյց, Երեւն 100—106)։ Գաւազանի բառը Այս յօդուածը հետաքրքրական է Քննադատի պատմական տեղեկութիւններով աւանդական դիտողութիւններով։

Քառերն. առ այս կրկին օձերէ գաւազան գաւազան կը կրէ ի ձեռին՝ գաւազան և խաչազան ի նշանակ։ Սոյն այս գաւազանն Հայ և Յոյն Եկեղեցիաց մէջ անցած է մեհնական հնարարեան աւանդութիւններէն քառուած . . . տարաբան չէ միայն որ յունականէն օտարաբան համարել մեզ զայն։

Երկու պարագային ալ գաւազանի գործածութիւնը, իբր նշանակ իշխանութեան՝ կրօնքի մէջ, շատ հին է, և մեզ համար կարեւորն ալ այս է արդէն։

3. — Տեսնենք հիմա թէ Տաթևացին ի՞նչ խորհրդանշական իմաստներ կը տեսնէ վարդապետական գաւազանին վրայ։

Գաւազանը շատ մը խորհրդաւոր իմաստներ ունի. կ'ըսէ Գր. Տաթևացին. ա) Կը նշանակէ իշխանութիւն, և այս յայտնի է իր խաչածն գլխին. որովհետեւ վարդապետի գաւազանին գլուխը Կաթողիկոսի գաւազանին պէտք է բոլոր (= գնդաձև) չէ, որ կը նշանակէ Կաթողիկոսը իր բոլոր ազգին վրայ հոգեւոր իշխանութիւն ունի. Եպիսկոպոսի գաւազանին պէտք է կեռ եւ միակուսի ալ չէ, որ (Եպիսկոպոսը) միայն իր Վիճակին մէջ կ'իշխէ։ Վարդապետին գաւազանը խաչածն է, և այս կը ցուցնէ թէ անոր քարոզչութիւն իշխանութիւնը անսահման է, որ չորս կողմ աշխարհի իշխէ, ի հաւատացեալս և յանհաւատս, ի քահանայս և յաշխարհականս, յեկեղեցիս և յարտաքսոս։ Բ) Կը նշանակէ զօրութիւն. գայոց ցոյց կուտայ գաւազանին ամուր և առկառ բուռը. «Եւ յայտ է զի վարդապետն բանի և արդեամբ զօրաւոր լիցի և արի և անյաղթի ի մէջ թշնամեացոս։ Գ) Կը նշանակէ ուղիղութիւն, զորս ցոյց կուտայ գաւազանին ուղիղ ըլլալը. «որով յայտ է զի նախ ինքն ուղիղ լիցի, և ապա գայլս ուղղեցնէ»։ Դ) Կը նշանակէ ճշմարտութիւն, զայս ալ ցոյց կուտայ գաւազանին ստուար (= հաստ) ըլլալը. «որով յայտ է զի նեցուկ և հաստաւորութիւն է տկարացեալ մարդկան»։ Ե) Գաւազանը կերպով մը կողմիւ առաջնորդ է. գայոց ցոյց կուտայ իր երկարութիւնը. վարդապետն ալ երկար խօսքերով կ'առաջնորդէ որ ճանապարհ երկնային կենացոս։ Զ) Կը նշանակէ խոցել եւ խեղդել. գայոց ցոյց կուտայ գաւազանին ծայրի խոցելու. — Վարդապետը պարտի ուսուցանել զհեղափոխական

միշտ և հանապազողան է) կը նշանակէ խրատ եւ անգիւղիւմ. գոյոյ ցոյց կուտայ գաւազանի տեսուիչը (= ոտուգարանաւորներ) այսինքն՝ որ հարկանէ զանքանս: Վարդապետն ալ խրատ եւ սատու ունի անգգաժմեհրուն համար: ր) կը նշանակէ մխիթարութիւն եւ ժողովումն, ածրան հօտերու հովիւներուն ցուպերուն եւ գաւազաններուն պէս գոյոյ ցոյց կուտայ գաւազանին գլխուն կորացումը: Զորով յայտ է զի ժողովեալ միեմարէ ըզվտացեալս եւ գարամեալս ի պէս պէս փորձութեանց, յոտով պահպաց: ք) Գաւազանը սրբութեամբ օտար յամենայն ձեռացօ, եւ այս յատկ կուգայ իր ողլակ եւ քեթիւ ըլլալէն: Վարդապետին ալ պէտք չէ օժանդակել եւ զփութել ի հարցումն բանի: ալլամենցուն իսնարկ եւ հնազանդ լինելը եւ քաղցր բարութ կալիւ: ժ) Գաւազանին գլուխը միջ բարձր է, եւ այս յարմար ձեւ ունի: Վարդապետն ալ պէտք է որ միշտ իր գլուխը՝ այսինքն միտքը բարձր բռնէ գէպի Բիւսաստ. եւ երբեք շխտարհեցնէ. քալաց եթէ խուն ինչ պիտայիք մտաւնայ, որպէս վերջին ծայր գաւազանին: ժա) Գաւազանին գլուխը հաստ է և մօտ է իրեն, ածայրն ալ նոյնը է և հնոյ իրով: Առ ալ կը նշանակէ որ ինքն՝ վարդապետը պէտք է կատարէ ծանր ու մեծ մեծ օրէնքները. իսկ քիչն ու թեթեւը ուրիշներուն քարոզէ: ժբ) Ինչպէս որ գաւազանը ծայրէն սկսելով հեղինակէ կը հասնուի, այնպէս՝ վարդապետն ալ պարտի աստիակ սակաւ կրթիւ ի մեծաւ գոյնսն, աստիճաններով բարձրել ելլիլու պէս: ժգ) Գաւազանին ճիշդ մէջտեղն է բունը. հաւասարակշռութիւն կ'էր. այս կը նշանակէ թէ վարդապետը պարտի գիտութիւնն ու արութիւնը հաւասարապէս ունենալ, թէ միջին ճամբուն պարտի հետեւի իր բոլոր գործերուն մէջ: ժդ) Գաւազանը վարդապետին ձեռքը կը տրուի. իսկ ձեռքը կը նշանակէ գործ. այսինքն՝ իշխանութիւն կը տրուի իրեն գործելու. որովհետեւ խօսքը գործքով կը հաստատուի: ժե) Վարդապետը գաւազանը միջ իր քով կ'ունենայ. ահաւապազ առ ինքն կրելն: և ասի կը նշանակէ Քրիստոսի հետեւի իր խաչը ստեղծով, հոգեոր զինուորի պէս, եւն. Սյուպէս, վարդապետն ալ այդ խորհրդանշանը (գաւազանը) միշտ իր ձեռքը պիտի ունենայ և

իր գործին վրայ պիտի մտածէ (Պետրոս Հատուր, էրես 168-169):

4. - Տեսանք որ գաւազանի տընդութեան արարողութիւնը լծորդուած է Գրիգորի ժամերգութեան վերջը եւ Առաջօրեանին սկիզբը: Գր. Տաթեպցին ալ նպատակաւոր է այս մասին. որովհետեւ Եփեսոսի Գրիգորի ժամ իբրեւմտութիւն վարդապետութեան գլխուն մէջ՝ տեսնելից պատճառներով աշխատած է յատարանի այս խնդրը (Տա՛ Պետրոս Հատուր, էրես 167-168): Տաթեպցին տուած խորհրդանշանը բացատրութիւններէն թերեւ օտար չէ հետեցնել թէ գաւազանի տընդութիւնը Գրիգորի ժամերգութեան մէջ կատարելու սովորութիւնը բաւական էր եւ այսինքն՝ ուղղակի Սրբեայ Դպրոցէն հլած նորութիւն մը չէ: Արդիւնում, ինչպէս կը թուի մեզ. եթէ ուղղակի Սրբեայ Դպրոցին սահմանում կարգադրութիւն մը ըլլար այդ, Տաթեպցին բացատրութիւնները աւելի զբաւան եւ աւելի հասկնալի պիտի ըլլային, մինչ այն սնկեկտառն իմն պատճառները, որոնք մեծ վարդապետին գրչով մեկնուած են, գրեթէ չեն յատարանի խնդրը: Այս տառնընդից պատճառներէն մի քանի նստր տառով կը բերենք՝ իր հետաքրքրական: ա) Արդիւնում Գրիգորն ըստ է. «Ջոր ստեմ ձեզ ի խաւարի, ասացէք ի լոյս (Մատթ. Ժ. 27). որովհետեւ սերմերն ալ նախ հողին տակը կ'աճին եւ ետքը դուրս կը պտղաբերին: ք) Ըսողին և լսողներուն մաքրը գիշերը աւելի եւ կը հանդարտին զգայութեան խոճապներէն. զեւ նոր իշխանութիւն ունեցող վարդապետը պէտք է որ նորագոյն բաժանով մատուակէ ազատցորդի իմաստ գիշնայ: զ) Այս կենցաղը գիշեր է և վարդապետը չոյսն է այս կենսաբան: զ) Մեր հակառակորդն է խաւարը, այսինքն աստուծոն ու աշխարհը. անոնց պատերազմը մասնաւոր գիշերը աստիկ կ'ըլլայ. ասոր համար գիշերուած այս ժամուն պէտք է պատրաստել վարդապետը: զ) Գիշերը տան մէջ ճրագ (լոյս) կը փոխենք, այնպէս վարդապետն ալ պէտք է միշտ վառ պահէ մտքին ճրագը իր մարմնի տան մէջ. և ճրագն ալ չորս կերպով կը մարի. կամ իւզը կը հատնի, կամ հողմով, կամ հողմով և կամ ջրով. վարդապետին մտքին իւզը Ա. Գրոց

գիտությունն է, պարտի միշտ ասոր վրայ խորհիլ և խոկալ, արտաքին հոգեբու գէտ փսիկ իր զգայարանները, ծուլութեան հոգէն գերծ՝ արի և արթուն ըլլալ, զինու- թեան գէտ հոգիով ու մարմնով զսպիլ ինք- զինքը՝ Է) Գիշերը հանկիստ է. որովհետեւ յոգնածը կը հանգչի և նոր այժ առած կը գործէ, վարդապետն ալ մեղքերով յոգ- նածները կը հանգչեցնէ և բարիք գործելու ոյժ կուտայ՝ Ը) Գիշերն արտաքին սգեղ ոյժ պոստիւթիւն լուսոյ. և ի ներքոյ էութիւն է օդոյ. այսպէս և վարդապետն պարտ է լինել արտաքին սգեղ, սեւաքոյր եւ զոռն հանդիսով եւ ի Երեւոյ օւնակացեալ լի՛ ընտրիօ հոգւոյն, եւ մի՛ կոկեալ եւ փերեւեհեալ զարդուք (Հմտ. անդ, երես 170-րդ)։ Բ) Որովհետեւ ասկիցն առար է՝ ի մէջ գիշերի, յորում կէտ արեգական սկսանի բարձրանալ ի վեր. և ի նմին ժամու տամք իշխանութիւն՝ ի յորում սկսանի յաւաստ- րիկ զարդարիլ (Խիւս պատճառները տե՛ս նոյն տեղ)։

Տաթևացոյ բացարձակութիւններուն հա- մեմատ, գաւազանի տըւչութիւնը իսկապէս գիշերը պէտք է կատարել, մանաւանդ կէս գիշերին, որուն սկսուածը ճիշդ արդի գի- տական կամ Եւրոպական հաշուով կ'որոշէ Տաթևացին. — Սրը կէս գիշերին կը սկսի թէև ստոյգ է որ Մաշտոցի մէջ Գիշերային ժամերգութեան լծորդուած է գաւազանի տըւչութեան կանոնը, բայց առ հասարակ շատե՛ց զաղրած է տառական ճշգրտութեամբ կատարուել իւրաքանչիւր ժամուն ժամիւ- գութեան. Այստեամենայնիւ, նկատի առնե- լով ժամանակի գործածութեան մասին տի- բով ըմբռնութիւնը և այն մեծ փոփոխու- թիւնները՝ որոնք նկատչեալ են աղագած են մարդկային բարքերուն վրայ, որոնցմէ գերծ չէր կրնար մնալ նոյնիսկ Եկեղեցին, պէտք է ԳՆՂ ըլլալ՝ և ի՞նչ գաւազանի տըւչութիւնը Գիշերային ժամերգութեան լծորդուած կա- տարուի իբր յարգանք գեղեցիկ աւանգու- թեան մը՝ որու նշանակութիւնը դարձեալ մութ կը մնայ Տաթևացոյն անգիտասան իմն պատճառաբանութիւններէն ետքն ալ։

Արտադրուած Առաջ Շարաքերէն, 1908
(Շարունակի՛ր՝ 12)

ԲՆՆՆՍԻՐԵԿԵՆ

ԳԻԼԳԱՍԵՇԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Աստուրական բնագիրը

1. — Սիւրբութիւն՝ գրինիտան աղախինը, որ կը բնակի ծոգեղանը],
2. — (որ) կը բնակի [...].
3. — անոր համար կուտ մը շինեցին, անոր համար շինեցին [սակեղէն կաս- կատակաւ մը].
4. — ան ծածկուած է քողով մը և [...].
5. — Գիլգամէշ կու գայ անոր մօտ և [...].
6. — զգեստաւորուած է մորթով [...].
7. — ան ունի աստուածներու միւսը [իր մարմնին] մէջ,
8. — (բայց) զիշտ կայ [իր սրտին] մէջ.
9. — [իր] գէմքը [նման է] [մէկու մը], որ երկար ուղեւորութիւն է կատարած.
10. — գրինեան աղախինը կը զիտէ հեռուն.
11. — կ'ըսէ իր սրտին (և) [կը խօսի] (այս) խօսքերը.
12. — ինքն իրեն հետ [խորհրդակցելով]։
13. — ակնկալեալ, այս (մարդը) մար- դա[պան] մըն է Գ,
14. — Ժբ կը յառաջանայ ան [...].
15. — Երբ գրինեան աղախինը գայն տե- սաւ, գոցեց [իր դուռը].
16. — գոցեց իր դուռը, փակելով գայն [նիկով մը].
17. — բայց ինքը՝ Գիլգամէշ լսեց [ձայ- ները],
18. — բարձրացոյց իր սրա[ծայր ցուպը] և գետն[զեց(?) ...].
19. — Գիլգամէշ [ըսաւ] անոր՝ [գրինեան աղախինին].
20. — Ե՛մմ գրինեան աղախին, ի՞նչ տե- սար [գոցեցիր քու դուռը].
21. — որ գոցեցիր քու դուռը, [փակելով գայն նիկով մը].
22. — պիտի խորտակեմ [քու] դուռը [և փշ]րեմ [քու դուռը]։

Սիւնական մնացեալը գէշ կերպով փըշ- րուած է. բայց անոր մեծագոյն մասը կա- բիլի է վերականգնել Sp. 299 բեկորով և այս տախտակի յաջորդական սիւնակներով՝ S. Schott, ZA, XLII, 1934.